ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՐԳԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ակադեմիկոս Գուրգեն Ներսեսի Մուշեղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզնիկ Կողբացու 42 շենքի 2-րդ մուտքի պատին փակցնելու համար:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԴԱԼՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՐԳԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գուրգեն Մուշեղյանը ծնվել է 1934 թվականին, Լենինականում:

1959 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետական բաժինը:

1961-1964 թվականներին՝ Գյումրիի գլխավոր ճարտարապետն էր, ապա՝ 1964-1967 թվականներին Երևանի գլխավոր ճարտարապետի տեղակալը:

1982-1990 թվականներին զբաղեցրել է Երևանի գլխավոր ճարտարապետի պաշտոնը:

1996թ.-ին եղել է Երևանի գլխավոր ճարտարապետ, Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ, քաղաքապետի խորհրդական:

2001-2009 թվականներին եղել է «Երևաննախագիծ» ՓԲԸ գործադիր տնօրենը: Դասավանդել է Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտում:

1963 թվականից Հայաստանի ճարտարապետների միության անդամ էր, Ռուսաստանի ճարտարապետության և շինարարական ԳԱ օտարերկրյա անդամ, Հայաստանի ճարտարապետության ակադեմիայի ակադեմիկոս:

Համահեղինակել է մի շարք հայտնի շինություններ՝ Երևանի «Հրազդան» մարզադաշտը (1971 թ., ՀԽՍՀ պետական մրցանակ, 1979 թ.), Գյումրու օդանավակայանը (1982 թ.), Մարզահամերգային համալիրը (1984 թ., ԽՍՀՄ պետական մրցանակ, 1987 թ.):

Գուրգեն Մուշեղյանի ղեկավարությամբ 1991-1995 թվականներին կազմվել են ՀՀ քաղաքների վճարովի հողօգտագործման, սեյսմիկ գոտիներում քաղաքաշինության համակարգերի կայունության ու հուսալիության նախագծեր, Երևանի 2006-2020 թվականների գլխավոր հատակագիծը:

Այս տարի՝ օգոստոսի 14-ին, լրացել է Հայաստանի վաստակավոր ճարտարապետ, պրոֆեսոր, Երևանի ճարտարապետության և շինարարության համալսարանի պատվավոր

դոկտոր, Հայաստանի Հանրապետության ճարտարագիտական Ակադեմիայի ակադեմիկոս Գորգեն Մուշեղյանի 90-ամյակը:

Հիմնվելով իր մեծ ավանդի վրա Երևան քաղաքի զարգացման և բարեկարգման գործում՝ առաջարկում ենք Եզնիկ Կողբացի փողոցի 42 շենքի 2-րդ մուտքի պատին, որտեղ նա ապրել է 1968-1999 թթ.-ին, տեղադրել Գուրգեն Մուշեղյանի հուշատախտակը:

Հուշատախտակի բոլոր ծախսերը իրականացվելու են հարազատների ֆինանսական միջոցներով:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԴԱԼՅԱՆ**